

ԲԱՃԱՆՈՐՈՒԹՅԱՆ
 ուղարկող համար
 Տարեկան 100
 Վեցամսյա 80
 Մասնակցական համար
 Տարեկան 80
 Վեցամսյա 80
 Անդրիկայի համար
 Տարեկան 3 ռ.
 Վեցամսյա 1.50
 ԿԱՆԻՍԻՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ
 Մակնորդական տոմար
 երեսն համար 40 սակարկ
 Կ. Իսկ վերջին երեսն համար
 20 սակարկ Կ. Երեքհն
 սակարկ անկապակեռու համար
 20 ժողովուրդ կրթության

ՇԱՐԻՔ

Նամակ եւ դրամ
 Խմբագրություն
 R. P. Kalemkarian
 (Austria) Mechitharistengasse W. 4
 Vienne
 ВЪСТНИКЪ
 «АРЖУМЪ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 Դրոսիակ եւ չեկ սրուիս

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉՈՐԵՔՆԱԲԻՒ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Մասնակցական համար ձեռնիկ
 (Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

ՔՈՒՐԹԻՉԱՆՆԵՐ

Քուրթիան (քծնող) բառը
 թեև ծանր է, սակայն այս պարագայի մէջ դարձեալ ամբողջովին չէ կարող արտայայտել ու բնորոշել այն մեղադրելի վարմունքը՝ որ ունին Եւրոպական պետութիւնները—Պօէրներու վերաբերմամբ:

Սկիզբները երբ նոր ծագում առած էր խնդիրը Անգլիոյ և Թրանսվալի միջև, Ափրիկեան փոքրիկ հանրապետութիւնը հնար ունէր քիչ զսկզբութիւններով վերապահելով իր բոլոր իրաւունքները, համերաշխութեան յանդիւ Անգլիոյ հետ: Բայց Եւրոպա գանձեցան թաղակիր գլուխներ, որոնք գաղտնի ու յայտնի խրախուսանքներով սիրտ տուին Թրանսվալի կառավարութեան որ ոչ մի զիջում չէ խորամանկ Ալբրոնի: Եւստի յիշուող գրգռիչ գրութիւններով հոգահարել ու դեռ չկայծուած կրակը բոցավառել:

Այդպէսով մահու ու կենաց խնդիր ըրին, հայրենիքի ազատութեան գատ շինեցին և Պօէրները խրեցին արեան նախճիրներու մէջ:

Այդ խրախուսիչ ու յորդորիչ արձագանքները որ Ալպեան ու Աթլաս լեռները ճշգրեցով կանցնէին միանալու հայր Քրիսկէրի սաղմոսերգութիւններու և մաղթանքներու հետ արգարութիւնը փառաբանելու, բնաւ կասկած մը ու թերահաւատութիւն մը չէին ներշնչեր անոր: Վերջապէս ապա ինձ այդ հզօր պաշտպաններու՝ նա քաջեց իր սուրը Անգլիոյ գէմ: Զինուց բազմը առաջ փայլուն յաջողութիւններ պարգեւեց պօէրներուն: Եւստի յիշուող Եւրոպայ ցնծութեամբ կը գլխաւորէր Պօէր զօրավարներու այդ ատան յաղթանակները, և քուրթիանները հոմերական գիւցաղներգութիւններ յօրինելով մինչև երկինք բարձրացուցին Պօէրեան գրօջակը: Ամբողջ Եւրոպական մամուլը պատեհ առիթ գտած էր իր ժահըրը ու թոյնը

թափելու այդ անյաջողութիւններու առջև պազ կանգնած անգլիացիի գլխուն: Բարիզի փողոցային մամուլը Թրանսվալի ակառօմայի հնարած բոլոր ածականներով ու մակդիրներով կը զարդարէր ժօն—Պուլը զաւեշական ամենատոր պատկերներու մէջ: Իսկ դիւանագիտական ու արքունական շրջանակները չէին դադարել իրենց համակրութիւնը յայտնելու ու բարեյաջողութիւն մաղթելու հայր Քրիսկէրին: Պօէրները զինովցած այդ տափակ պղատոնական սերտ լիր ցոյցերէն ու աւելի արքայի հզօր հովանաւորի զօրեղ միջամտութեան 5 ամիս շարունակ անօրինակելի քաջութեամբ կըրուեցան ու իրենց սովորները պատուով դաշտի վրայ թողուցին, իրենցմէ ահաւոր զօրութեամբ ու հարստութեամբ բարձր մի սոսկալի թշնամիի գէմ հերոսաբար մարտնչելով:

Վերջապէս այդ հիացուցիչ ազատասիրութիւնը, անձնուրացութիւնը ու զիյցազնական ընդդիմադրութիւնը ուժապատ ու ջախջախեալ՝ հարկագրուեցաւ գլուխ ծռել ու չօքել այդ ահաւոր ու կոշտ ուժին առջև: Այս տիեզերքի վրայ ընդհանուր կանոն է: Բնական անգութ արամաբանութեան—յաղթողը զօրաւոր կըլլայ և իրաւունքն ալ միշտ իրենն է:

Զօրավար Քրոնէ հակառակ իր զինուորներու արի քաջութեան, ստիպուեցաւ անձնատուր ըլլալ, որովհետև 4000 հոգի ու 20 թնդանօթ մի քանի տասնեակ հազարնոց բանակին գէմ ճակատամարտ մղելու անկարելիութեան մէջ էր:

Քրոնէի անձնատուր ըլլալովը, Թրանսվալի կռուի արամը մենք խաղցուած կը գտնանք: Իրականութիւնը իր բոլոր գառն հետեւանքներով կը մերկանայ: Ո՛ր են հիմակ այդ ժողովրդի դատի պաշտպանողները: Ի՞նչու չեն միջամտել: Ո՛ր են երկուսն քուրթիանները որ խրախուսել կարգային պօէրներուն անվախ շարունակելու իրենց հայրենա-

նուէր պատերազմը ընդդէմ «բաթի» որսորդներուն (՝): Ափսոս, Գերմանիոյ կայսրը ալ քաջալերական ու շնորհաւորական հեռագիրներ չի տար հայր Քրիսկէրին, Ռուսիոյ կայսրը կտրուկ կերպով կը յայտնէր իր զինուորական նախարարին—Խիտ չեղորութիւն պահելու: Եւստի զուարթ Իտալիան յանցաւոր Ձէմպերլէնը կը շնորհաւորէ կատարեալ յաղթութեամբ: Աստրիա մարշալ Ռօպէրթսի բանակներու յաղթական քայլերը Վիէնայի օրէրայի ու շանթաններու յարմարուց: Վասիտի կարմիր գազանն ալ այդ պարտականութիւնը կատարելէ ետ չի մնաց, փութաց պատու Վիթթօրիան շնորհաւորել անգլիացի աննկուն զինուորին քաջութիւնը զոգելով:

Ասոնք են պաշտօնական բուրբութիւնները, իսկ աննշանները չարժեք մեջտեղ բերել: Այս առթիւ նաեւ յեշտատկելի կը համարենք որ այդ ընդհանուր վըրջըրցին մասնակցեցաւ նաեւ մեռելական ճահիճի մէջ եղող թուրք մամուլն ալ «զիտողութիւն» ընելու: Եւստի սիրտ առնելով Բիւզանդ Քէչեանը կը խրատէր անգլիացիները փոխանակ ճառեր արտասանելու ռազմագիտութիւն սովորին, իսկ կարգ մը խեղճ ուղեգրով խանութպանները ու եղամածինները հեղինակաւոր զինուորականներու ու դիւանագէտներու հովեր առած՝ Անգլիայի կործանումը հորիզոնի վրայ կը նշմարէին: Թէեւ ասոնք անկարեւոր ու անարժէք էին: Նայն Եւրոպական մամուլը որ գափնիններ կը հիւսէր Հարաւ Ափրիկէի հերոսներուն, այսօր սոյլը կը դարձունէ և միջոց կը փնտոէ Պօէրներու յատկացեալ գափնինները հիմակ, այդ «զղուելի» «կանացի» անգլիացիներուն տալու: Բարիզի «Թան»ը առաջին նշանը տուաւ իր խմբագրականով «Իտալա ու պատու կուտղներուն» նա կը երգէ քաջերը, և «յարատելութիւնը» «տոկունութիւնը» ու «արիւթիւնը» միեւնոյն անգլիացի զինուորին և միեւնոյն անգլիացի զբաղակարին որ մին-

չեւ երեկ անոր խմբագրիներուն կը ներկայանար մի խառնիճազան խոժան կնամարտիկներէ ու սնապարծներէ բաղկացած անգլիացի զինուոր որ երեկ Արէսի մանկալ իկն իսկ ըլլալու արժանի չէր, այսօր «քաջ» զինուոր կըլլայ:

Ի՞նչ ստորնութիւն և ի՞նչ շուքորթութիւն:

Եւ ի՞նչ լու գաս փոքրիկ ազգերուն:

Այս է Եւրոպական դիւանագիտութիւնը, անոր հասարակական բարոյականութիւնը ու Աստուածային արգարութիւնը:

Վա՛յ յաղթուողներուն ու տկարներուն:

ԹՂԱԿԻՑ

Սօֆիա, 1 Մարտ

ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 28/11 Փետրվ.

Կարինէն տխուր, խիտ տխուր լուր մը եկաւ:

Քաղաքի քովերը երկու հայ գիւղ, շուրջ 300 ընտանիք փառած են ռուսական եկեղեցիին: Առաջնորդական տեղապահ Ջաւէն վարդապետ այս առթիւ մանրամասն տեղեկագիր մըն է զրկեր և իր վիճակին բազմաթիւ հոգեբը պարզեր է:

Ամբոխի համար կրօնն ու պատիւը, ազգն ու հայրենիքը շատ ալ գին չունին: Նիւթ, հաց և անձնական հանգստութիւն ասոնք են ամբողջ շարժող տարրերը: Եւստի անհաւանդ մութ ու ասիական հայ ամբոխը: Եւստի համար մեր մէջ հացի և ստակի համար կրօն փոխուներ շատ կան:

1895 արիւնտ տարին ի վեր, թշուառութիւնը ու սովը անեցան, հարկերու վճարումը դժուարացաւ և ոյժմ գիւղացիին անհնար է պետական ծանր հարկերը վճարել: Բայց կառավարութիւնը ստարին ներս կը լեցնէ, «միս ու սոկր» կընէ ու կը պահանջէ:

Աս անել վիճակին ելք մը գտնելու համար, Կարնոյ ատ գիւղացիները, տէրուէր ու քէխեա, «իշխանք և ժողովարդ»

թափթիւնէ կամ խմորի մէջ սկզբունքը թողնուի . քանի մը բաժանորդ կամ ջնջ համակիրներ շահելու վրան միայն մտածողէ մը ամէն բան կը յուսացուի :

Բուն հնչակեանութիւնը ենթադրենք որ չունէր այնքան մեծ գործունէութիւն մը , ասոր հետ մէկտեղ մարդ չի կրնար ուրանալ այն մեծ սարսափը զոր կազմէր թրքական կառավարութեան , ինչ որ իր մեծամեծ օգուտները ունէր եւ ունեցաւ . այս անգամ կուսակցութիւնը տապալեց Արփիարը , ու իր այդ կործանիչ զեւրովը հայկական յեղափոխութեան ուժին մէկ մեծակալ մասը ջլատելով , ազգին դարձուց թշնամիին թուրք մարտնչութեան մը աւելի մեծ ծառայութիւն մը ըրաւ : Քայքայող քանակով գոհ չեղաւ , այսօր ալ Եւրոպայի մէջ իր պատկառելի ոգին ի գործ կը դնէ , եթէ ոչ Հայաստանի , դոնէ արտասահմանի հայութիւնը պարհայեակ յեղափոխութեան , աշխատելով ամէն ինքնապաշտպանութեան միջոց «արշաւանք»ներ ցոյց տալ . ու ամէն պատասխանատուութիւն ձգել յեղափոխականներու վրայ . բան մը որ թուրք կառավարութիւնը միջոցներ ծախսելով միայն թերեւս յաջողէր : Վերջապէս այժմ ալ տապալելու կը ջանայ յեղափոխական աւելի մեծ ուժ մը—թէեւ իր մէկ ապաւանջը այսօր կանգնած է—կուսակցութիւն մը՝ որ 8—10 տարիներէ ի վեր Հայաստանի պահպան հրեշտակը , ու հայ ազգին մէկ հատիկ միջոցներով կը շնորհակալուի անոր : Եւրոպայի թրքական թերթերով եւ տնտես արքանեակներով—որոնցմէ հայերէն Հնդկադէպտի մտնողը րաժի մը ունի—յեղափոխութիւնը հրապարակաւ մերկացնել թուրքին առջեւ թուրք թերթի մը պէս : Այս ամէն ազգագաւ միջոցներն զործածողին եւ իր համախոհներուն յանցանքները , վշտանքը համեմատել , ինչպէս ըսի , նիւթական վնասի մը հետ , պարզապէս մեզ կարծել կուտայ թէ այդ զազափոխները . . . փոխող արարածը կամ չունի որոշ արամաբանութիւն , դատաւարութիւն ու խելք , եւ կամ անոնց մեղաւորից է : Արդարաւորութեան ո՞ր սեսակն է այս ընթացքը . . .

Կոյր հիացումով եւ կուսակցամուտութեամբ սողորուած , մեր «անկողնակալ»ը Գրոշակի յաւելումներն չուզէր հաւատք ընծայել , ու իր թմրուկը . . . կը զարնէ , առանց բնականաբար անոր վրայ լաւ խորհելու : Վայրկեան մը իրեն հետ ընդունինք որ այդ ամէնը զբաղաւորութիւն է . 1891 տարուան Արեւելիի Յունուար 12 եւ 2098 թիւին մէջ հրատարակուած Խորհրդակ մեղադատութիւնը գոյութիւն ունի թէ ոչ . այդ կարծեմ ինքնին զօրաւոր ապացոյց մըն է հնչակեան սարկական զազրելի նկարագիրը ցոյց տալու . ու այդ ստոր նկարագրին տէրն է այսօր , ազգային վերակազմակերպութեան գեղատարր . . . էֆէնտիմ , հարկը օյէնքը կը լուծէ , մարդ իր նպատակը իրագործելու համար միջոցի մէջ խորութիւն դնելու չէ եւ այլն—այս իմաստով պատասխան մը եւս գրէ թերեւս վաղը Պ. Արփիար «անկողնակալ»ին եւ միանգամայն Գրոշակին : Այս միջոցի մէջ խորութիւն դնելու չէ , բայց ստորութիւնը , քննութիւնը , մասնութիւնը եւ յարոյսական անկողնակալ ալ իր զպաթնակալին հասցունելու չէ , բան մը որ Պ. Արփիարի հետ բանասարկութիւններէն եւ ոչ մէկը ըրաւ . . . Ամբողջ հայութեան բարեբարը , պահպան հրեշտակը անուանել , օրհնել կամ երկրպագել այն

ցածը՝ որ գահիճն է հայ ազգին , եւ այս ցածուութիւնները . . . հասարակութեան ալ հաղորդելու համար միջոցի մէջ խորութիւն չի դնել» թրքական հարկէր մէջ սարկացած ներքիններուն գործն ալ չէ : Թո՛ղ որ մէկէ աւելի զէպքեր առանց Գրոշակի իմաստութեան միայն զխոսքով վերապահուած ըլլալու՝ ծանօթ են նաեւ մէկէ աւելի անձերու : Յիշենք հատ մը . — ՎՍ . — Նազըմլին յանձնարարական ասած է (Արփիարը) գաւառական ստիպանութեան քաջքոյն քննութեան զէմ պատասխարելու համար Բ. Շ. Վկայ՝ Գ. » (յաւելուած Գրոշակի գեղատ. 15 , էջ 30 , երկրորդ սիւնակ . սուղ 46) : Այս խնդիրը որ շատ հարեանցի կերպով շօշափուած է յաւելուածին մէջ . մանրամասնօրէն ծանօթ է Բ. Շ. ի հայրենակից Գրքք-Քէսէլեան Կարապետ , Մովսէս եւ Ա. սասուր եղբայր (Յիլիպլ) , որոնք առանց մէկու մը ազգեցութեան ենթարկուելու : կը պատմեն շատ ճշմարիտ ու յստակ կերպով , նոյնիսկ «անկողնակալ եղբայրներն» ալ : Այս խնդիրէն ծանօթութիւն ունեցողները անձեր ալ կան հոս Բ. Շ. ի հայրենակից : Եւ ոչ թէ միայն Նազըմլին յանձնարարութեան է Բ. Շ. այլ ստիպանութիւններէն ձեռքի վրայ պաշտուելով հայրենիք հասնելէն վերջ ալ «երախտագիտական» զիր զրկած է Բ. Շ. Նազըմլին . . . Այս շօշափելի փաստերուն ի՞նչ պիտի ըսուի :

Չէ՛ , Պ. Եղա՛մա՛ծի , մեղքեցէ՛ր գոնէ ձեր միտմիտ ընթերցողներուն—որոնց թիւը բարեբաղդարաւ շատ չէ—ձեր այդ անմիտ քայողներով անոնց պարտաւորութիւնը որ հակուած է ամէն անգամ կենսական խնդիրներ մի՛ գոհէք ձեր հայրին . անհատներու զէմ ունեցած հակառակութիւննից կը գործածէք անոնց պատկանած կուսակցութիւններուն զէմ ալ : մինչեւ ե՞րբ այս անկումը , մե՛ղք , Համոզուեցէ՛ք որ նիւթ ալ տասանամե՛ր մէջ դաշնակցական մը իսկ չի մնայ—ինչ որ ենթադրելու համար մարդ յիմար ըլլալու է—հայրենիքը միշտ անոր գիրկը պիտի վազէ , քանի որ ան կը հայրենիքէ հայրենիքի գաւակներուն սիրած , պաշտած միտակ առարկան—զինքը : Դաշնակցութեան բարոյական եւ նիւթական մակարդակը ին՛ստ շատ բարձր է զայն տապալել ձգտող կուսակցութիւններէն . զորք եւ ձեր պետը ի գուր թուղթ կը մրտէք , ան կայ ու պիտի մնայ :

Յիլիպլ , 2 Մարտ

ԲԱՑ ՆԱՄԱԿ
ՊՈՒԿԱՐԻՈՆ ԱՅՅԵԼՈՒ ՇՈՎԻԻՆ

Անցեալ ուրբաթ օր քաղաքի Ս. Եկեղեցւոյ մէջ կատարուած յուզարկաւորութեան ատթիւ՝ տեղւոյն մասնաւոր ազնկանց կըրթարանին կողմէն ասանոցական պատգամաւորութիւն եկած է ի պատիւ հանգուցիլին՝ դազազին շուրջը իբր սգակիլ ընդունելու համար եւ նոյն եկեղեցւոյ քահանաներէն մին՝ Տ. Սարգիս անուն , թաղական խորհրդոյ հրամանաւ ոչ միայն կարգիլէ անոնց դազազին շուրջը համբարխմբութիւն , հպարտօրէն «կը պահանջէ որ եկեղեցիէն դուրս հանուին տնտէր» :

Արդ զուրք , որ այդ քահանայէն

աւելի մեծ հեղինակութիւն մը ունիք ի մասին եկեղեցական օրինակահամարութեան , կը հաճի՞ք մեզ հրապարակաւ բացատրել թէ ի՞նչ իրաւամբ եւ պատճառով ու եկեղեցական ո՞ր կանոնին հիման վրայ յենելով կը մերժուի ննջեցեալի մը ընծայուած յարգանքը եւ քրիստոնեայ եկեղեցւոյ զուսակները սրբավայրէն արտաքսել կուզուի :

Եթէ այս ընթացքը այդպէս լի է , դուք իբրեւ պուկարահայոց հովիւ ի՞նչ մտադրած էք տնօրինել այդ քահանային համար սբ եկեղեցւոյ պարզ պաշտօնը ունեցող թաղական խորհրդոյ մը աններելի հրամանին վրայ առանց անդրադառնալու , կը կրկնէ զայն յատենի եկեղեցւոյ եւ կանխաւ ոչ ձեր խորհուրդին կը զիմէ ե ոչ ալ աւագերէցին :

Դարձեալ ի՞նչ տնօրինութիւն պէտք է ընէք այդ թաղային խորհրդոյ նկատմամբ որ իր սահմանէն դուրս կելնէ եւ հակառակ մեր եկեղեցական կանոններուն անորակելի պատգամներ կարձակէ չորս կողմը :

Կը սպասենք որ պատասխանէք մեզ :

Յ. Ս. ՓԱՓՍՂՅԱՆ
Վառնա , 5 Մարտ

ԵԱԶՄԱՃԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

. . . Խմբագիր ,

Տեղս պատահած կարգ մը անտեղի ձեռնագրութեանց հետուէն զիտող եւ հանդիսատես լինելէ յետ , օյլիւս ատրող ցած ու պղծգալի խժոճութիւններու առջեւ լսելը մեր կարողութիւնէն վեր լինելով , ցաւօք սրտի կուրամք իրողութիւնը կարճ կերպով պատմել :

Մասնաւորապէս մեղադրելի կը համարուի նախ եւ առաջ Խաւառնի խմբագիրը , որ իրեն զրկուած մի անտեղի եւ ստոր գրութեան մը հրատարակելը անյարմար սեպելով՝ առարկած է թէ քոնի մը ստորագրութիւն հաւաքեցէք որ հրատարակեմ :

Հրատարակելին այս է . իբր թէ երեք տարի յառաջ զուրք ըսած ըլլաք թքնեմ վանեցիներու երեսը : Ասոր վրայ Գարեհատյի պախալին պնակները լող մուգսը «Յարութիւն Մուրատեան» , իրեն պէս այբը չի տեսած բէնը մահքէմէն զրկող կարգ մը պատկերներէ ստորագրութիւն կը ժողկէ հաւատացնելով թէ՛ զիւղի աէտութիւն փոխելու պէս բան մը կայ , անուննից այս թուղթին տակ գրել սուէք , անունք ալ՝ որովհետեւ արեւ չեն զիտեր , կարգալ հիշ կըսեն . գրէ Մկրտիչ Կարապետեան եւ այլն , առանց զիտանալու թէ ի՞նչ կընեն՝ եւ ի՞նչ է խնդիրը , եւ որու համար . միայն

թէ մէկ սուրճ եւ տասը փարայի կծու խափեար իրենց կը տրուի սուս վկայ լինելուն իբր վարձք , որով՝ այս մեր հացկատակները կը ջանան հանրութեան աղէտ լինել :

Իբր պաշտպան ազգութեան պատուոյն՝ վերջացնելով գրելիքս նախապէս ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ որպէս զի ջանաք վերջ մը տալ այս անտեղի արարքներուն հանրութեան սիրտը չի պղտորելու նպատակաւ : ()

Վանեցի
ԱՐԱՄ ԿԱՐԱՆՅԱՆ
Գարեհատ , 5 Մարտ

ՆԱՄԱԿ ԱՍՏՈՒՓ

Խմբագրութիւնս Պ. զասապ Զարեհ Պէշիբեանէն նամակ մը ստացաւ , որը իր խնդրանքով չենք հրատարակել . Պ. Զարեհ Պէշիբեան կը հերքէ իր մասնակցութիւնը Պ. քաղաքի 28 սնտուկի խնդրոյն քննութեան մէջ եւ կը հաստատէ մեր ստացած սեղեկութեան այն կարեւոր մասը որ կը վերաբերի ձգնաւորեանին . այն է թէ ձգնաւորեան սրճարանի մէջ յայտարարած է որ ինք ժողովրդի , «Իրաւունք եւ Արմէնիա» թերթերու կողմէն քննիչ շըրկուած է 28 սնտուկի խնդիրը քննելու :

Կը ցատկէք—որ Պ. Զարեհ Պէշիբեան մեր թղթակցին թիրիմացութեամբ խառնուած է գործի մը որ հայ յեղափոխութիւնը ապտոտելու եւ տապալելու համար է :

Համոզուած ըլլալով որ այդ խնդիրը հրատարակի նիւթ գործը ձընող մարդիկը , զիտակցաբար թէ անգլիակցաբար թուրք կառավարութեան գործիք կը դառնան ու փոխտոցինք որ Պ. Զարեհը , իր մասնաւոր կեանքի մէջ ինչ ալ որ ըլլայ այդ տեսակ մարդոց խմբակի մը մէջ գտնուել է . որովհետեւ զիտէինք թէ ինք յեղափոխութեան համար որոշ զոհուցումներ ըրած եւ նոյնիսկ անոր համար թուրքէն հալածուած մարդ մըն է :

Աւրախութեամբ կը յայտարարենք , որ ան պատահամբ ներկայ եղած է «մէճլիս» մը , որուն գործերը թուրքին փախաբաժը իրագործելու կը ծառայեն :

Արդեօ՞ք եազմաճին հիմակ ալ պիտի յայտարարէ թէ ձգնաւորեան սուս խօսած է՝ ինչպէս ա-

() Յարութիւն Մուրատեան՝ մեր խմբագրին Վառնայի ծանօթ աների մէկի մէջ խոհարար եւ ծառայ էր : նրա այցելած ժամանակ ստորակի պէս քննուեմ էր բարեկամութիւն հաստատելու : Եւ իբր քննող ստորակ միշտ արհամարում էր :

Մէկ անգամ էլ Շարժում էր ուղում ստանալ զանազան պայմաններով . եւ մենք արհամարհելով զուրս զրկեցինք :

Հիմա վրէժ է լուծուեմ իրեն հասարակ Նազմաճիի հետ միացած :

Մ. Խ.

առջին անգամ ուրացաւ : Ձեռք կարծեր, որչափ ալ ճգնաւոր- եանի մասին վատ կարծիք ունե- նանք, այնուամենայնիւ եազմա- ճիէն աւելի ճշմարտութիւն կը կար- ծենք :

Պ. Զարեհ խմբագրութեանս մէջ յայտնեց թէ իր անձնական կար- ծիքով իսկապէս Պ. քաղաքի ի- րարանցումի մէջ թուրքի մատը կերելի :

ՌՈՒՍԱԿԱՆ ՍՊՍՈՒՍՁԻՆՈՒԹԻՒՆԸ

«Վօլթի Պիւրօնէն» երեկուան հե- ազիր մը ռուսական ամբողջ բանակի միահամուռ սպառազի- նութեան յուզիչ լուրք տուաւ, ինչպէս նաեւ Պալմիկեան ու Սև ծովուն նաւատորմի գումարումը : Անցեալէն շատ օրինակներ յի- շելով Հիւսիսային կիկլոպը ա- ռանց կարեւոր ու ծանրակշիռ պատճառներու չէ շարժուէր մինչև հիմա և անոր սպառազի- նութիւնը միշտ շարաքառակ նշան է եղած տիեզերքի խաղաղ նիստ ու կացը վրէժովելու : Ինչ- պէս և առկա ռուս կնճոտ պատմա- կան խնդիրներու վերջնական վերլուծման վճռական հարուած մը տալու :

Հարաւ-Ափրիկէի մէջ Անգղիաի լուրջ ու ուշադրաւ զբաղուինք ռուսիայի ոչ պակաս քաղաքական նպատակներ առիթ մը կը ներկա- յացնէ որմէ չի օգտուիլն զուրկ անպազային աւելի բարգ քաղա- քական հանգամանքներու զէմ մարտնչելու գծուարութեանը մէջ զինքը կը թողնէ :

Միզի անբացատրելի կը մնար ռուսիայի այն պաշտոնական գի- մումները հայերու վերադարձի մասին եթէ գծողութիւնը ու զայրոյթը չըլլար որով համակուած է ռուսական գիւանդիտութիւնը Գերմանացւոց Փոքր-Ասիոյ մէջ տարած յաջողութիւններէն, և այն առաւելութիւններէն որ Պաղ- տատի-գիծի մենաշնորհը գեր- մանացւոց կը պարզուէ : այնպէս որ մի քանի տարիէն ռուսերու Հայաստանի մէջ թափած արիւնը բոլորովին իր գինը պիտի կոր- սունցնէ, և իսպառ պիտի նոսմացնէ Լորիս-Մելիքովի ու Լազարէվի փայլուն յաջմանակ- ները :

Ռուսիա ինչ ընել կը մտածէ : որո՞ւ զէմուզղած է իր քայլերը : ասոնք այնպիսի հարցեր են որ եւրոպական սպառնալուծ տենդոտ շուարումի մէջ գրած է : Ինչո՞ւ իր 5 միլիոնեան ստուարահոծ բանակներու շարժումը, ատոր պատասխանը միայն սպաղան պիտի որոշէ : ամենքը մութ են թաղարկան հաշիւներու շրջանին մէջ են : սակայն ամենուր անխո- տոր ու անփոփոխ հաւատքը այն է՝ թէ Ռուսիա զօրահանգէսներ սարքելու գիտաւորութեամբ չը պատրաստուիր, Ռուսիաի պատ-

մական խնդիրները միայն Արե- լելքի մէջ են, ուրեմն իր ապա- գայ գործողութիւններու թառե- րովայրը այնտեղ վնասուաւ է :

Եթէ պուլկար լրագիրներու հաղորդածը ստոյգ համարենք, ռուսական ահեղ սպառնալու- ռատութիւնը Պուրկազի հարցի յաջող կարողութեանէն յետոյ կուզան : մինիսթրական ժողովը հաւանութիւն է յայտնեց ռուս- կան առաջարկներուն և Պուլկա- րիոյ հասարակական կարծիքը բաւականին պատրաստուած է, ու սրտատրոփ կսպասէ Պուլկարիոյ անկախ թագաւորութեան հան- գիտաւոր յայտարարութեան որ պուլկար ազգային իտեալը պիտի պահէ փոխադարձաբար իր ա- զատչին պարզեւելով Պուրկազի ծովափորը :

Պուրկազ-Ռուսաստանի համար կե- նաց խնդիր է և ստ փաստը ինք- նին կը ապացուցանէ թէ Սև ծովը Ռուս ազգային պաշտպանողական կէտերէն ամենէն տկար կէտն է : (ընթերցողի մտաբերութեան կը բերենք «Պաղատա-Պուրկազ» յօդուածը «Շարժում» (թիւ 188) : Պեղծական զինուորական թերթ մը ուր յաճախ Պրիւմոնի յատակ ու ուղղադաս հայցեացքները կը գործմունին, հետեւեալը կըսէ Ռուս Սև ծովի նաւատորմի գիւրդաւորա- տութեան ու գործունէութեան առթիւ :

Ռուսական Միջերկրական նա- լախումը (էսքատորա) պիտի լըր- տեսէ ու զբաղեցնէ անգղիական մարտանաւերը ամէն կերպով խուսափելով վճռական ընդհա- րումներէ մինչև որ իր Սև-ծով- եան նաւաբաժինը Տարտանէլի նեղուցը փակէ : Այս ծովային մանէվրը ու ռազմավարական խցարկումը պիտի կատարուի այն ձեւով ինչ որ ամերիկացի Տէվի ծովակալը, Սանթիակոյի ծովախորշին մէջ Սերվերայի նաւախումբը փակեց :

Տարտանէլի փակումը պիտի ըլլայ այն եղանակաւ ինչ որ ռուսական զինուորական գիտու- թիւնը յարմար գտած է : ռուսա- կան մարտանաւերը Տարտանէլի շուրջը Օտէսայի ուղղութեամբ (Թուրքիոյ ափական ու եւրոպա- կան ափը մահիկաձեւ գծով պիտի գոցեն : Պուրկազը ձեռքի աակ ունենալը այն առաւելութիւնը պիտի տայ ռուսերուն որ իր նա- լերու ճամբան դէպի Պոլիս կի- սով շափ պիտի պակսեցնէ, և այս պատճառներով Պուրկազը Սև-ծովեան պաշտպանողական ճրագրին մէջն է : Միանգամ Սև ծովը փակուի քերուած Ռուսիա Արեւելքի հետ, գլխա- ւորաբար Թուրքիոյ հետ, պիտի վարուի այնպէս, ինչ որ իրեն ներշնչած է դարերով յառաջ Մեծն-Պետրոսի քաղաքականու- թիւնը, Ռոմանոֆներու գահի ամբուլութեանը համար վստիտը խարսխել :

Իսկ անգղիացիք ի՞նչ պիտի ընեն : այդ մասին երկու-երեք օրուան միջոցը Բրիտանական զէնքի փայլուն ու իր ազգային հպարտութիւնը շողող յաջմու- թիւնները ու յաջողութիւնները աւելի ազատ տրամադրութեան մէջ դրած են քաղաքականու- թիւնը, և Լոնտոնի հեռագիր- ները շատ անել կացութեան գրին թուրքիոյ Սուլթանը որը վստահ միշտ ռուսական ու անգղիական դարեւոր հակակրօնութեան օգ- տուելու վրայ՝ վերջին ռուսական խիստ դիմումներուն զէմանգղի- ական պաշտպանութիւնը կը խնդրէ, իսկ անգղիայէն ժխտա- կան կերպով կը յայտարարուի թուրքային : Թէ իր վրայ յոյս չը տածէ : Անգղիա՝ Ռուսիոյ դիմումներուն ու պահանջումնե- րուն զէմ երբէք չի պիտի հա- կառակի, և Թուրքիա որ հայե- րու համար պարտաւորած է բա- րենորդումներ բնելու անմիջա- պէս կատարելու է : բայց և այն- պէս անգղիացիք անգործ չեն կենար : այս օրեր Ալեքսանդրիա կը սպասուի 14 առաջին զրահա- ւորներ և 4 թորփիլաւորներ 8000 նաւազով : եթէ ստոր վրայ աւել- ցնենք Մալթայի նաւախումբը որ 18 է աւելի ահագին նաւեր իւրա- խում են, պիտի ունենանք ահա- ւոր ծովային ուժ մը որ մինչև հիմա Անգղիա չէ կեղծուցուցած Միջերկրականի վրայ : Սուլթանի մտերմ ու հատարիմ գաշնա- կիցը Վիլհելմ կայսրը ինքզինքը չեղք կը յայտարարէ : Հիւսիկ- ունէ գեռ ամէն ինչ որոշ չէ : գուշակութիւն ընելը գծուար է, բայց Ռուսիոյ սպառազիտութիւնը որ գղրգիւն պատճառած է ամ- բողջ աշխարհին, առաջին ու վերջին գործը Թուրքիայի հետ պիտի ունենայ՝ որմէ կարեւոր պի- տի ունենայ նաեւ հայկական ճա- կատագրի յաջող կամ անյաջող լուծումը : կամ հայը նորէն ռու- սական արծուի ճիրաններու տակ աւելի խոտութեամբ անշարժ պիտի կենայ՝ կամ ալ ազատու- թեան արշալոյսը պիտի գայ ա- մսքելու իր բազմաաանջ վէր- քերը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 5ին գիւղացիները Վառնայի մէջ մեծ միթիւն գ մը ըրին «տասանորդի» նոր օրէնքի զէմ : Կառավարութիւնը ձեռքա- կալած է րանոնց առաջնորդներէն մին, նախըթաց երեկոյիսն, և հետեւեալ օրը ամբողջ գիւղացի- ները կը պահանջէին որ իրենց առաջնորդը արձակուի կառավա- րութիւնը չըղիջանցաւ : անոր և գիւղացիներու միջև ընդհարում տեղի ունեցաւ : Զօրքերը հրա- ցան արձակեցին : քանի մը մար- գիկ վիրաւորուեցան մէկ հաս ալ մեռաւ :

— Ամերիկացիները իրենց երկ- սեռ ռուսանոցներէն հանգանակած դրամով Փարիզի մէջ ֆրանսացի Լաֆայէտի համար, որ Ամերի- կայի ազատութեան համար կրո- ուած է անգլիացիներու զէմ : արձան պիտի կանգնեցնեն : Ռ- սանոցներէն հանգանակուած գու- մարը մէկ միլիոնէն աւելի է :

— Հայոց Պատրիարքը բողո- քած է նոր զինուորական սուր- քերու զէմ :

— Բեգերսպուրկէն կը հաղոր- գեն թէ սպայակոյտի գլխաւոր շինութիւնը հրգեհուած է և շատ կարեւոր թղթեր ոչնչացած են, նոյնպէս և Պուլկարիոյ վերաբեր- եալ թղթեր :

— Թուրքիան Մաքսային սուր- քը 0յ0 3 տոկոսով աւելցուցած է : Բասորայի մէջ մաքսատան իշխա- նութիւնները ուղած են այդ ու- րէնքը գործադրել, սակայն հիւ- պատաները բողոքած են :

— Անգլիական ազգային ժո- ղովներու մէջ կարողացուած են Թրանսօվալի երկու նախագահնե- րու յայտարարութիւնը որով ա- նոնք կը հաղորդեն թէ պատե- րապէս սկսած են անկախութիւնը պահելու համար և խաղաղութիւնը միայն այդ պայմանով կուզեն :

Լօրս Սալպարի իր պատաս- խանին մէջ կը յիշէ որ թրանս- վալիաները եօթը տարիէ ի վեր պատերազմի պատրաստուեցան եւ անգղիական կառուածները խուժեցին : ու Անգղիան ատոր համար բոլորովին արամագիր չէ անոնց անկախութիւնը պահել : Այդ պատասխանը մեծ ծափահա- րութեամբ ընդունուած է ազգային ժողովէն և պատերազմական փո- խտութեան օրէնքը նոյնպէս :

— Պրանսական զեւսպանը ջա- նացած է Սուլթանը համոզել երկպառական խնդիրը ձեռք առ- նուլ : քանի որ Անգղիա զրոգ- ուած է : սակայն Սուլթանը չէ համաձայնած որովհետեւ համոզուած է թէ Անգղիա միշտ զօրուոր է :

Ա Ջ Դ

Տ. Վահան Մամիկոնեանի «Պոլիս» ճաշարանը փոխադրուած է հանրածա- նօթ «Օթէլ Պոլիս», ի Ռուսոյք : ուր բոս առաջնոյն կը պատրաստուին հայկական համեղ կերակուրներ :

ԻՄՐԱԿՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»

Կը սպազբուին ամէն լեզուէ այցեատմս, հասցէտմս, նամա- կաղլուխ, հարսանեկան հրաւի- րողիւ, մահալղ :

Գիները յոյժ գիւրամատչելի- Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդու- թեամբ և փութով կը կատար- ուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՆԻՒՄ